

Ի դեպ



Բեւ

7

3

ԱՅՍՊԷՍ ԽՕՍԵՅ ՍՏԵՓԱՆԸ
Գուրգէն Արզումանեան

12

ԲՆՈՒԹԵԱՆ ԱՆԽՕՍԵՐԳՈՒԹԻՒՆԸ
Պետրոս Ալահայտոյեան

17

ԹԱՏՐՈՆԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ, ՈՒՐԿԷ՞ ՈՒՐ
Մարուշ Երամեան

22

ՍԵԾԱՐԱՆՔ ԵՒ ՅԱՃԱԽԱՆՔ
Ժիրայր Չոլաքեան

Խմբագրեց՝ Էլիզաբեթ Գրիգորեան
E teb • 2354 Pennerton Dr. • Glendale, • CA 91206
eteb@earthlink.net • www.eteb.com
© 2008 E teb

~ ԱՅՍՊԷՍ ԽՕՍԵՅ ՍՏԵՓԱՆԸ ~

Ութ տարի է որ Ստեփան Փարթամեանը ոչ միայն վարում է հեռուստատեսային ուղիղ եթեր, այլև կազմակերպում է մշակութային շատ ուրիշ ձեռնարկներ, ինչպես «Գառնի» երաժշտական արտադրանքը, կամ վերջերս Հոլիվուդ համերգադաշտում հայ երաժշտութեան նուիրուած համերգը, սակայն իր գործունէութեան հանրայայտը ուղիղ եթերներն են, այդ շարքից յատկապէս «Բարի լոյս» հաղորդաշարը: Հեռուստածրագիրը սկսում է հայկական ժայռապատկերներից փոխառուած արեգակի երեւումով եւ յետոյ մեղմ երաժշտութեամբ գուգորդուած, պաստառին երկու ուղղագրութիւններով գրուում է բարի լոյս, լույս, թերեւս այն մտադրութեամբ երկու ուղղագրութիւնով, որ լոյսը ոմանց կողմից լոյս չը կարողացուի եւ պատգամը ճիշդ ընկալուի, իսկ պատգամը ըստ ընդունուածի, լուսաբացի ողջոյնի խօսք է, այլ ակնարկ է իմաստութեան լոյսին, ցերեկ ու գիշերով չը սահմանափակուող:

Վերջին ամիսներին հեռուստատուփին ապաւինած, աւելի ընդունեցայ գրեթէ կանոնաւոր կերպով հետեւելու «Բարի լոյս» հաղորդաշարը եւ մէկ անգամ եւս ականատես լինելու Լոս Անջելոսի հայ համայնքների մէջ տիրող սրուածութիւնը: Հիմնականում աւանդական եւ նոր սփիւռքների հարց է, սակայն հաղորդավարը ութ տարիների ընթացքին, հեռախօսը անջատելու սպառնալիքով եւ խարազանող խօսքերով, յաջողել է այդ սրուածութիւնը մեղմացնել եւ հաստատել բոլորի կողմից յարգուող կարգ ու կանոն, կամ խաղի օրէնքներ:

Քննարկուող նիւթերը բազմազան են՝ այս համերգը, այն թատրոնը, Ապրիլ 24, վերջը չը կանխատեսող ընդիմութիւն, խաղամոլութեամբ տարուած պապիկներ ու մամիկներ, խառն ամուսնութիւններ... մէկ խօսքով, ընկերային, մշակութային, քաղաքական նիւթեր, քիչ է բառերով ասած՝ համայնքին յուզող հարցեր, որոնք շատ յաճախ

մէկ կամ երկու հեռագանգողի անմիտ յայտարարութեամբ շեղուում եւ հասնում են շատ հեռուները: Հաղորդավարը թոյլ է տալիս այդ շեղումները եւ ի հետեւանք հաղորդումը աւելի ազատ ու հետաքրքրական է դառնում: Սակայն բուն հարցը մնում է ինքնութեան, այս դէպքում թերեւս անինքնութեան հարցը:

Յաւելեալ, առկայ է լեզուի եւ բառարանների մէջ շփոթորքան որ հայերէնը շահում է օտար բառեր չգործածելու հաղորդավարի խթանող եւ խստապահանջ կեցուածքից, նոյնքան տուժում է հայերէնները խառնելու արդէն սովորական համարուող իրողութիւնից: Շահեկան է անշուշտ մերսիի փոխարէն ասել շնորհակալութիւն, որքան էլ որ վերջինի արտասանութիւնը անվերջանալի գնացք թուայնոյնպէս պայման է ջան. աղաք. դաղը. պոքրիւմ եւ մի շարք շատ ուրիշ օտար բառերի հայերէնի գործածութիւնը, իսկ հայերէնների խառնուրդը, եթէ կարելի է այդպէս կոչել, արդեօք առաւել նուազ կերպով նոյն հետեւանքը չունի՞, ինչ որ օտար բառերի գործածութիւնը, թէ՞ առկայ է հեռանկարը նոր մի լեզուի, որ կարող է կոչուել արեւահայերէն, կամ որպէս վերջին այլընտրանք՝ լոսանջելոսահայերէն: Խուսափելու համար չհասկացուելուց, խօսակիցը սահուն սկսած իր արեւմտահայերէնը փոխում է անվարժ արեւելահայերէնի, կամ արեւելահայրի նշան բարեկամութեան ու մօտութեան, միանգամից սկսում է շինծու արեւմտահայերէնով շաղակրատել, մինչ, ո՛չ հասկացուելը եւ ո՛չ էլ մօտութիւնը լեզուի հարցեր են:

Ասուեց հեռուստածրագրի բուն հարցը ինքնութեան հարցն է, կարելի է աւելացնել գոյութէնապաշտ ինքնութեան հարցը, որ ակնյայտ է դառնում Ստեփան Փարթամեանի պոռթկուն յայտարարութիւններով եւ ակամայ յիշեցրնում է Նիցչէի ժամանակին խնդրահարոյց, յետոյ հանրայայտ, այժմ գրեթէ մոռացուած «Այսպէս խօսեց Ջարադուստրան», ուր ի դէպ, մոռտքը նոյնպէս կապուած է մեծ լուսատուին: Զարագուստրան տաս տարուայ իր մենութիւն-

Թիւնից ձանձրացած, դուրս է գալիս իր քարանձառուից եւ դիմում է արեգակին: Մօտաւոր թարգմանութեամբ՝

«Ո՛վ մեծն լուսաստղ, ի՞նչ կը լինէր քո ցնծութիւնը եթէ չունենայիր նրանց ովքեր որոնց համար շողարձակում ես: Տաս տարի քարանձառու բարձրացար՝ եթէ ես ու արծիս ու օձս չլինէինք դու կը ձանձրանայիր քո լոյսից ու այս ճամբից: Սակայն մենք սպասեցինք քեզ իւրաքանչիւր առաւօտ, ցրածներդ հաւաքեցինք ու դրա համար օրհնեցինք քեզ: Ահա յոգնել եմ իմ իմաստութիւնից. շատ մեղր կուտակած մեղուի պէս պէտք ունեմ ձեռքերի որ դէպի ինձ երկարեն: Կը բաշխեմ ու կը բաժանեմ որ կրկին անգամ մարդկանց խելացիները գուարճանան իրենց անմտութիւնից եւ չունետրները իրենց ունեցուածքից:

Մուտքի խորհրդանշական արեգնային նմանութիւնց գատ, հաղորդաշարի տարբեր հարցերի քննարկումների ընթացքին դրսեւորւում են շատ ուրիշ մտային նմանութիւններ, օրինակ, նոր եկեղեցիներ կառուցելը երբ մի խումբ հեռագանգողների կողմից անհրաժեշտութիւն նրկատուեց, արժանացաւ հաղորդավարի դիմադրութեան ու գայրոյթին, յիշողութեամբ՝ «Այ յիմարներ, հասկցէ՛ք, Աստուած չկայ, դուք է՛ք Աստուածը, ի՞նչի պիտի ծառայէ այդքան դրամի մսխումը»: Եւ սա նման է գրքի յաջորդ այն տեսարանին երբ Ջարադուստրան իջնում է անտառ եւ հանդիպում է անտառաբնակ տարեց այն սրբին որ մարդուց փախած ապաւինել էր Աստծուն: Մտքերի փոխանակումից յետոյ երբ Ջարադուստրան լքում է անտառը եւ մնում է մենակ, մտածում է՝ «Հաւանակա՞ն է որ այս սուրբ ծերուկը անտառի մէջ տակաւին լսած չլինի այն մասին որ Աստուած մեռել է»:

Ուրեմն յայտնի է դառնում որ առանց մարդու արեգակն ու տիեզերքը նշանակութիւն չունեն, — բարի լոյսը որ հաղորդավարի կողմից յաճախ է հասցէագրւում հեռուստադիտողին, նոյնն է ինչ հասկացողին բարեւ ասաց-

լածքը, որ այս դէպքում խրախուսական խօսք է որ ունկընդիրը ոչ թէ կառչի երեւոյթներին, այլ լինի երեւոյթներին իմաստ տուողը — ապա յայտարարւում է որ Աստուած մեռել է կամ չկայ: Մահուան տարբերակը աւելի համոզիչ է քան չլինելու տարբերակը, որովհետեւ նախ պէտք է ապացուցել եւ յետոյ հերքել, առաջին տարբերակի մէջ ներկայացուած է երկուսն էլ. ամէն դէպքում, երբ չկայ Աստուած, մարդը պարտաւոր է ստանձնել յաւելեալ պարտականութիւններ, այդ յաւելեալի համար Ջարադուստրան առաջարկում է գերմարդը, իսկ Ստեփանը՝ զարգացած հայը, մէկը հակած մարդկային հեռանկարներին, միւսը՝ ազգային: Մարդը որպէսզի դառնայ գերմարդ ըստ Ջարադուստրայի պէտք է որ խորանայ իր մէջ, թափանցի ընդերքը, գաւաթի պէս լցուի ու պարպուի, արեգակի պէս բարձրանայ ու իջնի, ներքեւում սողող եւ բարձրունքում սաւառնող օձին ու արծիւին ընկերակցի, իսկ հայը որպէսզի դառնայ զարգացած հայ, ըստ Ստեփան ֆարթամեանի, պարտաւոր է որ իրատես լինի, ազատուի սնոտիներից, ժամանակի հետ քայլ պահի եւ շահագործի 21րդ դարի ընձեռած առեւտրական ինչպէս եւ արեւստագիտական կարելիութիւնները:

Այլ հաղորդումով, ինչպէս որ ասուում է, խօսքը գնում էր Սփիւռքի եւ Հայաստանի մասին, եթէ անշուշտ գանգահարողներից ոմանք թոյլ տային որ գնար: Հեռագանգեցին եւ ձրիաբար տրամադրուող բնակարանների մասին հետաքրքրուեցին, հեռաձայնեցին եւ հաղորդավարի արտաքինի մասին կարծիք յայտնեցին, հեռաձայնեցին եւ լկտի արտաշայտութիւններով փորձեցին գուարճանալ, մէկ խօսքով, երկար շեղումներից յետոյ նիւթը իր հունը գտաւ եւ գրոյցը սկսեց, սակայն քանի որ նիւթը առնչւում էր հասարակութեան տարբեր հատուածներին, բախումները անխուսափելի էին: Հայաստանցին պարսկահայի խօսակցական ոճը ծաղրեց, լիբանանահայը հայաստանցու օտարամոլութիւնը քննա-

դատեց, ամերիկահայր քիչ ինչ քիթը վեր անգլերէնով սառնարիւն լինելու խորհուրդներ տուեց, յետոյ հերթը հասաւ իւրաքանչիւր հատուածի լաւ հայերէն խօսողներին ծանրը հրետանին, որ այնպէս թուաց, իրենց հեռագանգելու նպատակը ոչ թէ նիւթի քննարկումն էր, այլ այն, որ ճո՛խ հայերէնի ցուցադրութեամբ ապացուցեն թէ ինչպէս չորս հարիւր տարի օտարուչեան մէջ պահպանեցին հայերէնն ու հայ մշակոյթը: Ուրիշ մէկը՝ ես հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի... արդէն հաղորդավարի համբերութեան գաւաթը լցուեց եւ՝ ճիւերուս թէ դուք ինչ էք, ես ինչ նիւթ առաջարկեցի եւ ահալապիկ թէ դուք ինչի մասին կը խօսիք, հասկցէ՛ք, բոլորս ալ հայաստանցի ենք... Սփիւռքահայերին ճրիարար եւ մեծահոգութեամբ շնորհած քաղաքացիական այս իրաւունքը, գաղթօջախների համայնքներին հաւասարեցրեց պետականութեան տէր եւ հայ մշակոյթի բնօրրանի մէջ թրծուելու փոխարէն այրուած նախկին քաղաքացիներին, իսկ նախկին քաղաքացիները դժգոհ այս հաւասարումից, հնչեցրին՝ ո՞նց թէ, միթէ՞ կարելի է, շատ ծանօթ նախադասութիւնը: Հետեւաբար հաղորդավարը որպէս ապացոյց, առաջ քաշեց երկրի հարցը՝ կորածն ու գտնուածը, հինն ու նորը, վանողն ու ձգողը:

Սա այն պահն է որ Զարագուստրան հեռանալով անտառից մօտենում է առաջին քաղաքին ուր կազմակերպուած էր լարախաղացութիւն: Սպասող բազմութեան առջեւ նա խօսեց գերմարդու եւ երկրի մասին.

... Որդից մարդուն հասնելու ճամբան անց կացրիք. սակայն տակալին ձեր մէջ շատ բաներ որդային են: / Ահա ձեզ կը ուսուցանեմ գերմարդը: Գերմարդը երկրի իմաստն է: Թող որ ձեր կամքը ասի՝ գերմարդը այիտի որ լինի երկրի իմաստը: Եղբայրներ, ձեզ երդում եմ տալիս հաւատարիմ մնաք երկրին եւ շիւստաք նրանց ովքեր ձեզ հետ խօսում են ոչ երկրային յոյսերից:

Երկրին եւ հողին հաւատարիմ մնալու միեւնոյն կեց-

ւածքներն են, սակայն Զարագուստրան խօսքը չաւարտած մէկը բացազանչեց՝ «շատ լսեցինք լարախաղացի մասին, այժմ թող ներկայանայ», եւ բոլորը սկսեցին ծիծաղել, ինչպէս որ սկսեցին ծիծաղել եւ ծաղրել Ստեփան Փարթամեանին երբ յայտարարեց որ Հոկտեմբերին ընդմիջտ Հայաստան պիտի մեկնի, դէպի արմատները:

Անշուշտ Ստեփան Փարթամեանը վաղուց է անդրադարձել որ գարգացած հային գուգահեռ գերակշռող քանակութեամբ գոյութիւն ունի տգետ հայր եւ յաճախ է խօսում այդ մասին, ինչպէս որ Զարագուստրան է խօսում մարդու մասին որ վսեմ մարդու եւ գերմարդու մասին լսելու փոխարէն նախընտրում է լսել ստորին մարդու մասին: Իսկ ստորին մարդը կամ տգէտ հայր այն մարդն է որ հեռուստածրագրի ժամին հեռաձայնում եւ խօսելու փոխարէն, ո՛վ գարմանք, էչի պէս գուռում կամ աքլորի պէս ծուղորուղու է կանչում, կարծելով որ լոյս է բացուել եւ բացւող լոյսին այդպէս պէտք է հակազդել: Ստորին մարդը քրիստոնէութիւնը պաշտպանող այն մարդն է, որ երբ գրտնում է վիճարանութիւնը պարտւելու սեմին, որպէս վերջին խօսք, յայտարարում է, go fuck yourself!

Ոչ անպայման Ստեփան Փարթամեանին, այլ յառաջող մ գաղափարները կամ այլախոհութիւնը հարուածողները, ինչքան էլ որ փորձեն կիրթ ձեւանալ, շատ արագ արդէն առաջին բառերով եւ նոյնիսկ իրենց խօսակցական ոճով, մատնում են իրենց իսկական էութիւնը:

Իրողութիւնը այն է, որ այս փոքր տարածքին տարբեր երկրներից համախմբուած հայերը մեծ հաւակնութիւններ ունեն, մէկը իրեն միւսից վեր է դասում, մէկը իրեն միւսից աւելի գարգացած եւ ճիշդ հայ է գգում, մինչդեռ խորքում բոորն էլ ինչ որ ձեւով աքսորեալներ են որ ոչ կարող են իրենց արժէքները պահպանել, ոչ էլ նորը ստեղծել: Դրժբախտաբար անհատներից սկսած մինչեւ միութիւնները, դպրոցներից մինչեւ կազմակերպութիւնները, բոլորն էլ կորցնելու սարսափից սլաքները ծուել են դէպի պահպանել,

այն աստիճան որ գոյացել է յառաջադիմութեան անկարող, պահպանողական մի համայնք:

Հետաքրքրականը այն է սակայն, որ ամէն ինչ պահպանելի չէ, այն է պահպանելի որ արդէն հասել է իր վախճանին եւ իր տեղը գերեզմանատունն է կամ թանգարանը: Երբ լեզուն խօսում եւ դեռ հայր երգում ու պարում է թերեւս ուրիշներից աւելի շատ, լեզուապահպանում կամ հայապահպանումը նշանակում է կանխահաս վախճանի փափաղ: Պահպանումն ու զարգացումը հակառակ եւ իրարամերձ բեւեռներ են, զարգացումը պահանջում է փոփոխութիւն, յաւելում, իսկ երբ փոփոխուեց, յաւելում կրեց, նշանակում է որ չպահպանուեց, այլափոխուեց, ուստի չպահպանելով է որ պահպանում է, այսինքն, պահպանումը պահպանումի միակ եւ անպնայմանօրէն ճիշդ միջոցը չէ, այլ զարգացումն է պահպանումի գրաւականը: Լեզուապահպանում, թէ՛ լեզուազարգացում, հայապահպանում, թէ՛ հայազարգացում, առաջինը տեղաբայ է իսկ երկրորդը յառաջադիմութիւն եւ Ստեփան Փարթամեանի զարգացած հայի խօսքը այդ է վկայում:

«Այսպէս խօսեց Ջարաղուստրան», ամենքի եւ ոչ մէկի համար գիրքը, տաս ենթարաժիւններից բաղկացած մուտքից յետոյ, չորս գլուխներով ներկայացնում է ութսուն ասոյթներ: Ասոյթներից շատերը նոյնպէս ինչ որ ձեւով համապատասխանում են հեռուստածրագրի ընթացքին զրտուորուող գաղափարներին ու պատահարներին: Հեռուստածրագրին հետեւողը արդէն գիտի որ ութ տարիների ընթացքին, հաղորդավարը, թերեւս պէտք է ասել հաղորդիչը նոր պատգամների, վաստակել է հաւատարիմ համակիրներ ինչպէս եւ երգուեալ թշնամիներ: Հեռուստադիտողը գիտի որ հաղորդավարը ընդհանրացումներից խուսափելու համար, դիտողներին բաժանել է երկու խմբի՝ աջ կողմի եւ ձախ կողմի նստողներ, աջ կողմիները կարծեմ մասնների վրայ հաշուող փոքրաթիւ զարգացած հայերն են, իսկ ձախ կողմիները մեծամասնութիւն

կազմող տղէտ հայերը, եւ կրակօտ իր խօսքերը յաճախ ուղղուած է ոչ թէ բոլորին, այլ ձախ կողմի նստողներին: Նաեւ անշուշտ պէտք չէ մոռանալ «էջ»ին որ իր մասնակցութեամբ դարձել է հաղորդաչարի անբաժան մասնիկը:

Այս պատկերը ակամայ յիշեցնում է գրքի աւարտին ներկայացուած «Խօսակցութիւն արքաների հետ» ասոյթը, ուր Ջարաղուստրան իր ճամբին հանդիպում է երկու արքայի եւ մէկ էջի: Արքաներից մէկը կոչուած է աջ կողմի, իսկ միւսը ձախ կողմի արքայ, որ պարզուած է ճամբայ են ելել գտնելու վսեմ մարդուն: Երբ հանդիպում են Ջարաղուստրային, ասում են.

«Քո այս բառերի շեղքով դու փարատեցիր մեր սրտերի ամենախիտ խաւարը: Դու մեր ցանկութիւնը իմացար, ուստի տես, մենք վսեմ մարդուն փնտռելու ճամբին ենք – մարդ որ մեզանից աւելի բարձր է, թէպետ որ արքաներ ենք: Այս էլին մղում ենք դէպի նա...»

Յաճախ դիտողներից ոմանք երբ գանգատուած են որ հաղորդավարը միջոցների դիմի որպէսզի արգիլի իշուկի անտեղի միջամտութիւնները, հաղորդավարը համբերատարութեամբ բացատրում է՝ վնաս չունի, թող հեռաձայնի, պէտք չէ որ մերժել, ժամանակ է պէտք որ մարդ դառնայ, հայ է, չէ՞, նման խօսքեր: Այս արտայայտութիւնները նոյնն է ինչ որ էլին դէպի վսեմ մարդը մղելը: Նոյն ասոյթի երկրորդ մասում, աջ կողմի արքան ասում է.

Ո՛վ Ջարաղուստրա, ինչ լաւ որ դուրս եկանք որ քեզ տեսնենք: Թշնամիներդ քո պատկերը իրենց հայելիների մէջ մեզ ցոյց տուցին. այնտեղ սատանայի ծամածռուած տեսքով էիր երեւում. այնպէս որ վախեցանք քեզնից: Սակայն ինչ կարելի էր անել. իրաքանչիւր անգամ ընտրեալ ասոյթներով փարուեցիր մեր ականջներին ու սրտերին: Ուրեմն վերջապէս ասացինք՝ ի՞նչ տարբերութիւն թէ ինչ տեսք ունի...

Հեռուստադիտողը նաեւ անպայման կը յիշի հաղորդավարի այն արտայայտութիւնը ուղղուած հակառակորդներին, թէ իրենք իրենց հայելու մէջ է որ տեսնում են իր պատկերը, կամ այն երեւոյթը որ, ոմանք հեռաձայնեցին եւ ասացին իբր թէ երեխաները, թերեւս իրենք չափահասները, վախե-նում են որ միայն հաղորդավարի գլուխն է երեւում եւ մարմինը չկայ:

Այս նմանութիւնները ընթանում են զուգահեռ մինչեւ որ Զարադուստրան իր ճամբին նաեւ հանդիպում է այլ ընտրեալ մարդկանց եւ բոլորին որպէս վսեմ մարդիկ հրաւիրում է իր քարանձաւը, սակայն կարճատեւ բացակայութիւնից յետոյ երբ վերադառնում է, տեսնում է երկու արքաները, հանգստի կոչուած Պապը, դաժան վհուկը, ինքնակամ մոլորացկանը, թափառականը, շուքը, ծերուկ գուշակը, խղճի տէր ոգին, եւ սգեղագոյն մարդը, բոլորը միասնաբար երկրպագում են էջին:

Անշուշտ հեռուստաձրագիրը իր իւրայատուկ ժայռապատկերներով նոյն քարանձաւն է, բեմը, ուր բոլորը հրաւիրուած են մտքեր քննարկելու, սակայն հարցը այն է, հաւանական է արդեօ՞ք, որ եթերային այս հիւրերը եւս, վերջում ենթարկուեն գրքի վսեմ համարուող մարդկանց գայթակղութեան: Պատասխանը անյայտ է, պետք է սպասել եւ տեսնել: Այդու ամենայնիւ, վերջին անգամ երբ միացրի հեռուստացոյցը, այսպէս խօսեց Ստեփանը՝ հայի ուղեղը ժանգոտած է, մի կաթիլ ոչ թէ մեղր, իւղ է պէտք, որ այդ ուղեղը սկսի աշխատել:

Գորգէն Արզումանեան

~ ԲՆՈՒԹԵԱՆ ԱՆԽՕՍԵՐԳՈՒԹԻՒՆԸ ~

Նուէր՝ Է. ին

Երբ Հայաստանէն ժամանող ընկերուհիի մը հարց կու տայի «Ինչպէ՞ս ես», պատասխանեց ըստ սովորութեան՝ «Ոչ-ինչ. իսկ դո՞ւ», պատասխանեցի՝ «Մի քիչ՝ ինչ...»:

«Ոչինչ»ը եւ ոչնչութեան կամ ոչնչանալու վախը մեծ դերակատարութիւն ունին զգայուն եւ հոռետես հայ անհատին ներքին աշխարհին մէջ:

Ահա պատմական դարձած Արեւմտեան Հայաստանէն վերապրող սերունդը. ան Սփիւռքի մէջ հիմը դրաւ իր նոր կեանքին՝ իրական ոչինչէ մեկնելով, սակայն անոնցմէ մէկը դարձաւ Ազնափուր, միւսը Բարսեղ Կանաչեան:

Մեր ներկայ Հայաստանի ստալինեան օրերու ոչնչացումները մեծ թափ ստացած էին, իբրեւ հետեւանք մէկ-երկու վիշապածին բռնատէրերու դժոխային կամակորու-թեան: Ոչնչանալու վախը, որ բոյն դրած էր հայուն սրտին մէջ, տարածուեցաւ անապատի նման ստրկացած անհատի հոգիէն ներս: Պատերազմի երկար տարիներուն ոչնչով ապրեցան, շրջաններ ամբողջ ոչնչացումի եզրին եղան, ապա՝ ոչնչով վերսկսան՝ գրեթէ ոչնչով գոհ եղան, անյուսու-թիւնը ոչնչէն յոյս ծնաւ, ոչնչէն վերածաղկած Հայ կեանքը գաղտնիօրէն բեղմնաւորուեցաւ, անտեսանելիօրէն յաղթահարելով 1915ի, նաեւ 1937ի արհաւիրքները: Հայ բանաստեղծներ եւ երաժիշտներ «ոչնչէն» երգ ու քերթուած ստեղծեցին: Եւ տակաւ խինդն ու խայտանքը սկսան կրկին հոսիլ վերապրող հայու աչքերէն, միախառնուելով անոնց արտասուքին:

Ինչ է, ոչ-ինչը հրա՞չք ծնաւ յանկարծ, եւ, եթէ «ա՛յո», այդ ինչպէ՞ս եղաւ:

Բնագիտութեան մէջ «ոչնչութիւն»ը կարելի է պատկերացնել օդին բացակայ վիճակով, որուն կու տան «պարապու-թիւն» անունը: Մարդ արարածի հոգեկան շաղախին

մէջ այդպիսի պարապուծիւն գոյուծիւն չունի, բայց թերեւս կարելի ըլլայ խօսիլ անկարողականութեան մասին, կամ ըսենք կամաւոր կամակորուծեան մասին, սակայն «ոչ-ինչ»ը մեզի կը ներկայանայ պարապուծենէ տարբեր ոլորտով, անտեսանելի նոր սկզբնաւորութեան մը նախածարձակումը կրնայ ըլլալ, տեսակ մը նուագագոյն մեկնակէտային բջիջը, ան, որուն բացակայութիւնը կարելի է իրաւամբ մահ անուանել եւ վերջ: Ես տակաւին կը գարմանամ ինչպէ՞ս կրցանք վերընձիւղիլ թրքական եւ ստալինեան գոյգ արհաւիրքներէ ետք, թէ եւ մեր կորուստները եղած են անչափելի, անզնահատելի, անվերստանալի, անդարմանելի եւ անդարձ:

Բնութիւնը դիտելով եւ ուսումնասիրելով (բնութիւն - Աստուած միաձուլուած) կրնա՞նք մեր մտքին համար հասանելի պարզ կամ բարդ պատասխաններ տարագել: Ինչ լաւ է որ գիտենք՝ թէ ծառի մը պտուղը ոչնչութենէ չի ծնիր, նոյնիսկ չենք գարմանար ալլեւս (քիչեր՝ կը գմայլին, երանի այդ քիչերուն...) որ առատ կանաչութիւն կը բուսնի հոն ուր ոչ մէկ բան կարելի ըլլայ ցանել, օրինակ ժայռերու ճեղքերուն կամ կուպրապատ ճամբաներու ճաքերուն մէջ, կամ, ի՛նչ առեղծուած, Հիւսիսային Ամերիկայի ամենէն տաք, ամենէն չոր՝ «Մահուան Հովիտ» կոչուած շրջանին մէջ կեանք կայ, իբրեւ արդիւնք ի՛նչ ընդյատակեայ լուռ ու գաղտնի խմորումներու – որքա՛ն հեռու ենք «ոչ-ինչ»էն եւ ենք «ինչ»երու եւ «ինչպէս»ներու գրկին մէջ: Բնութիւնը որո՞՞ւ «հրահանքով» կ'ընէ իր կարելի լաւագոյնը եւ կուտայ իր կարողութեան լաւագոյնը, առանց մեզի դասեր տալու «մարմաջ»էն բռնուած, նուագագոյն ջուրով գոհացած եւ առաւելագոյն արեւէն խանձած ու բնական արհաւիրքներու յորձանքներէն յաւերժօրէն տարուբեր:

Ի դէպ, այն ինչ որ «ոչ-ինչ» կ'անուանենք, յաճախ մեր ցոփ շուքութեան կուրցած աչքերուն անտեսողականութեան հետեւանքը չէ՞: «Ոչինչ» հունտի մը կամ «ոչինչ» բջիջի մը անծայրածիր կարողականութեան միայն մա-

սամբ ծանօթ ենք եւ արդէն գլխու պտոյտ կ'ունենանք, սակայն ան, բնութիւնը, անխուով, մեզի կը պարզեւէ, ապահով, կեանքի շարունակականութիւնը, անկախ այն բանէն թէ՛ կ'ընդվզի՞նք թէ՛ կը հրճուինք: Մեզի հագիւ թէ ծանօթ մոլորակներէն ինչէ՛ր կրնան ծնիլ կամ ցարդ ծնած են արդէն՝ մեզի համար անընձեռելի իրենց կարողականութիւններուն բովէն...

Կեանքը, ոչ-ինչէն կամ «ինչ»երէն անդին, բոլոր ըստեղծուածներու եւ գալիք ստեղծուելիքներու կարելի եւ ձգտուածուած փոխ-յարաբերութիւնը կարելի է համարել, իսկ մարդը ունի յաւելեալ առանձնաչնորհեալ յարաբերութիւններ նախ ինքզինքին հետ, ապա իր նմանին հետ եւ հիմնականօրէն իր ստեղծած կիսաստուածներուն հետ կամ գինք Ստեղծող "է"ին հետ:

Այս փոխ-յարաբերութիւններու ամբողջութիւնը, անոնց որակը, նկարագիրը եւ նպատակը կը կազմեն աշխարհ մոլորակին ճակատագրական հոլովոյթը:

Այս միլիոնաւոր փոխ-կապերու պատմութեան մէջ, գոհողութեան ոգին եւ անոր գործնականացումը կը կազմեն արարչագործութեան հրաշալիքներէն՝ ի երջանկութիւն եւ հզոր պատգամ «ոչինչ» մարդ արարածին:

* * *

Փոքր տարիքէս իմ յատուկ ուշադրութեան կեդրոնը գրաւած է բնութեան բնական «գոհողականութիւնը»: Օրինակն երբ ըլլալու են բազմազան եւ գարմանագան, սակայն մեր գիւղի պարտէզի ծառերը ինձի «խօսած» են իրենց «գոհողամտութեան գաղտնիքի» մասին: Փոքր տարիքէս հիացած եմ գոհուելու պատրաստ տերեւներուն եւ պտուղներուն վրայ, երեւոյթներ որոնք արտասուք խլած են իմ ժլատ աչքերէն:

Ահա թէ ինչ:

Ժամանակին ունէինք պարտէզ Լիբանանի հեռաւոր գիւղերէն մէկը: Մայիսի վերջերուն թէ ամառուայ սկիզբին կեռասենիները կը պտղաբերուէին: Այդ բեղմնաւորումի առատութեան շրջանին մեր կեռասենիները կը խոնարհէին

մինչեւ գետին ճիւղերու բեռնակորույթեան տակ: Հետաքրքրական էր նախ այն, որ պէտք էր յօտել «աւելորդ» ըսուած ճիւղերը, որպէսզի մնացեալ ճիւղերը իրենց լրիւ լրումին հասնէին՝ պսակուելով հիւթեղազոյն ու ժիր պըտուղներով: Հայրս համաձայն չէր, իր խօսքով, այդ «բարբարոսութեան» ընթացք տալ, մանաւանդ գիւղին մէջ վստահելի բանգէտ հայ գիւղացիներ չկային կարծես: Այս գոհաբերուող ճիւղերու յատանումը խորհրդածութեան նիւթ էր ինծի համար եւ «խմբային» գոհողութեան պատկերը կը պարզէր, ինչպէս զինուորներ՝ իրենց երկրի պաշտպանութեան ճակատագրուածները: Սակայն ինձ խորապէս յուզողը գոհողութեան «անհատական» պատկերն էր. այսպէս՝ արդէն իսկ ծնած կեռասներուն կարեւոր մէկ մասը կը «գոհուէր» ինքնաբերաբար, որպէսզի ապրէր իրենց երկուորեակ կամ գուգածին կէսը, այսինքն՝ նոյն ճիւղին նոյն ոստին վրայ կողք կողքի ծնած երկու կեռասներէն մէկը, ծնունդով համեմատաբար աւելի ազագունը, «կ'որոշէր» բնականօրէն իր հիւթն ու ներուժը փոխանցել իր կարչնեղ, քաջակազմ կողակիցին քանզի այս վերջինը աւելի հաւանականութիւն ունէր հասնելու լրիւ փթթումի եւ կատարելագործումին: Այնուհետեւ գոհուող սերնդակիցը հետզհետէ կը կծկուէր, կը փոքրանար եւ կը չորնար: Երբ կողքի ուժեղացած, ուռճացած եւ համովցած կեռասը կը քաղէի եւ կը պատրաստուէի ուրախութեամբ ուտելու յանկարծ կը նշմարէի անոր փորին վրայ, պորտի նման, հետքը այն միւս, «սիրով եւ ուրախութեամբ» գոհուածին, որմէ մնացած էր միայն չոր կորիզը:

Մարդկային գոհողութեան ոգին առ հասարակ կը յայտնուի տկարին օգնելու կամ վտանգուածը ազատելու գործով՝ նուիրումի պատրաստակամութեան մեր ոգիէն բխած, գոհի գաղափարէն մէկ քայլ անդին անցնելով...

Դեռ կան գոհուող հիւթատու տերեւները գգերենիին (նորաշխարհ), որոնք կը դեղնին եւ կը թափին պտուղներուն հասուննալէն եւ քաղուելէն բաւական ետք, իսկ անպտուղ գղերենին կամ գկեռին գրեթէ տերեւ չկորսնցներ իր ան-

պտուղ ամբողջ շրջանին: Ինծի համար սնափառութեան օրինակներ էին այդ հասակ նետած ծառն ու տերեւները, առանց պտուղի:

Այս անասելի, անտեսանելի ու բնական գոհողութեան մշտանորոգ օրինակը «ոչինչ»ներու ընթացիկ շարքին դասել, թէ խորհրդածել անոնց մասին եւ օրինակ առնել, բնութիւն-Աստուած արարչագործութեան լուի-մնջիկ այս հրաշալի կենսագործութենէն, որ տեղի կ'ունենայ առանց գառանցանքի, կամ պաթոսերգութեան կամ հերոսանայրու խրոխտ հպարտութեան:

Զմայլիլ միայն կրնամ բնութեան հրաշակերտ անխօսերգութեան առաջ:

Այո, անտեսանելի «ոչինչ» մը կրնայ բեղմնակորուիլ տեսանելի հրաշքի:

Պետրոս Ալախալոյեան

~ ԹԱՏՐՈՆԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՁ ~

Ուրկէ՞ Ուր

Հայէպը արարական աշխարհին մէջ նշանաւոր է իր դժուարահաճ հանդիսատեսով. հասարակ տեղիք դարձած է խօսքը, որ կ'ըսէ.

«Եթէ արուեստագէտ մը (դերասան, երգիչ, նրկարիչ...) յաջողեցաւ Հայէպի ժողովուրդը գոհացնել, ուրեմն գինք յաջողած պէտք է նկատել»:

Հայէպահայ գաղութը քանի մը տարիէն կը թեւակոխէ իր նոր պատմութեան հարիւրամեակը. եւ, ըստ արարական առածին՝ ան որ քառասուն օր կ'ապրի ցեղախումբի մը հետ, անոնցմէ կ'ըլլայ... ուրեմն հայէպահայերը եւս, իրենց շատ աւելի երկար կեցութեան ընթացքին, բաւական ազդուած ըլլալու են տեղացիներէն:

Իրապէս ալ հայէպահայերը յատուկ հոտառութիւն ունին մանաւանդ թատերական արուեստին հանդէպ: Գաղութին տեղական քանի մը խումբերէն զատ, հիւրախաղերով ելոյթ ունեցած են նաեւ տարբեր խումբեր Երեւանէն եւ Պէյրութէն:

Տարիներ առաջ Երեւանի Տրամաթիքական թատրոնը Հայէպ պիտի գար. կարգ մը պատասխանատուներ կը թելադրեն «Թեթեւ, գաւեշտային գործերով հանդէս գալ, որովհետեւ հայէպահայ հանդիսատեսը ատակ չէ ծանր գործեր ընկալելու...»:

Խումբը չորս թատերգութիւններ բեմ հանած էր Հայէպի մէջ. «Փռապանին Կինը» սիրով դիտուեցաւ, «Պաղտասար Աղբարը» լաւ էր, «Անլուելի Զանգակատուն»ը անշուշտ լաւ էր, մեր ցաւն էր ու մեր արցունքը, իսկ «Մոռանալ Հերոսդրատին»...

Ծանր, փիլիսոփայական մենախօսութիւններով յագեցած այս թատերգութիւնը հայէպահայ հանդիսատեսին կողմէ ընկալուեցաւ յոտնկայս եւ երկարատեւ ծափահարութիւններով: Հայէպը այդպիսի ընդունելութիւն չէր տեսած. ատկէ ետք ալ չտեսաւ կարծես:

-Ի՞նչ հասկցաք,- կը հարցնէին զարմացած պա-

տասխանատուները, որոնք թելադրած էին «Թեթեւ, գաւեշտական...»:

Իսկ հանդիսատեսը չէր կրնար պատասխանել թէ ի՞նչ հասկցած էր, բայց վստահ էր, որ ի՞նչ որ զգացեր էր որպէս տպաւորութիւն, բարձրորակ արուեստի արդիւնք էր:

Գաղութի կեանքին սկիզբէն իսկ թատրոնը եղած է արուեստի առաջին արտայայտութիւնը, հայէպահայերուն համար: Տարեցները բարի երգիծանքով կը խօսին այն օրերուն մասին, երբ դպրոցի բակին մէկ կողմը տախտակներ իրար գամել-կապելով բեմ կը շինէին, չուանի մը վրայ սաւան մը նետած վարագոյր կը սարքէին եւ անպայման «Վարդանանք» կը խաղային: Թաղը թաղով, մեծով-պրզտիկով, մեծ հայրիկներով, թոռներով ու երեխաներով կու գար տարեկան այդ մեծ իրադարձութիւնը դիտելու:

Յետոյ խումբեր կազմուեցան, ելոյթները կարգ-կանոնի մտան, սաւանը իսկական վարագոյրի վերածուեցաւ, հայէպահայերը մէկի փոխարէն քանի մը շքեղ թատերասրահներ ունեցան, եւ սիրող դերասանները սկսան լուրջ-լուրջ իրենց դերերը պատրաստել:

Հայէպի մէջ գործող թատերախումբերուն ամենէն հինը Ադամեան թատերախումբն է (1961ին հիմնուած), որ արհեստավարժ մակարդակ մը նուաճած է, հակառակ բոլոր անդամներուն սիրողներ ըլլալուն: Բայց պէտք չէ ուրանալ դերը արհեստավարժ դերուստոյցներուն անշուշտ:

Ադամեանի վերջին ելոյթը «Էդիտ Կանանց Մասին» կը կոչուէր. ասիկա խումբին 74րդ իրազործումն է: Իր ծնունդէն մինչեւ այսօր Ադամեանի հետ բեմ բարձրացած են 295 դերասան-դերասանուհիներ:

«Էդիտ Կանանց Մասին» երաժշտախառն թատերգութիւնը ոչ միայն ուրախացուց հանդիսատեսը, այլ եւ ստիպեց, որ մարդիկ մտածեն իրենց տեսածին ու լսածին մասին, հարցադրումի ենթարկեն ժառանգուած հասարակ տեղիքները, եւ անդրադառնան յաճախ սովորական կարծուած երեւոյթներուն:

Բայց, խորքին մէջ, ինչպէ՞ս կ'ընտրուի Հայկական թատերախումբի մը խաղացանկը:

Սկիզբը ոգին պահելու առաջադրանքն էր գլխաւոր մտահոգութիւնը: Քանի մը տասնամեակ ետք մօտեցումը փոխուեր էր:

-Կարեւորը երիտասարդներուն քով-քովի գալն ու հայկական միջնորդութիւնը եւ հայերէնին մէջ ըլլալն է,- կ'ըսէին պատասխանատուները:

Ժամանակը, իր թաւալքով, շրջան մը ետք կրկին փոխեց առաջադրանքը:

-Հաճո՛յք. միայն հաճոյքով կրնանք հանդիսատեսը գրաւել...:

Որովհետեւ, ըսելու պէտք կա՞յ, թատրոնը կ'ապրի (հոգիով ու մարմնով) միայն ու միայն իր հանդիսատեսին շնորհիւ:

Այսօր ի՞նչ է թատրոնին նպատակը ոչ միայն Հայէպի, այլ եւ Սփիւռքի մնացեալ գաղութներուն մէջ, որոնցմէ քանի՞ն տակաւին թատերախումբ կը պահէ արդեօք:

Հայէպահայ դերասաններու եւ հանդիսատեսներու փոքր թիւ մը տարիներէ ի վեր երազած է գաղութին մէջ ունենալ փորձառական թատրոն մը, ուր միակ առաջադրանքը արուեստը ըլլար: Արհեստավարժութեան այս դարուն սխալ ձգտում չէ ասիկա, կը կարծեմ: Բայց ո՞վ պիտի պահէ թատրոնը, ինչպէ՞ս, եւ... ինչո՞ւ:

Երիտասարդները, որոնք գաղութներուն ներոյժն են, կարծես արուեստի պէտք չունին:

«Ոտանաւորն ի՞նչ ընել, ոտանաւորը կ'ուտուի՞...» ըսեր է մեր հնչեակի իշխանը... Այսօր կարծես նոյնն է, փոքրիկ բառափոխութեամբ:

«Արուեստները ի՞նչ ընել...»:

Ինչո՞ւ թատրոն պահել, այդքա՛ն հսկայ ծախսի տակ ձգելով միութիւնները, մանաւանդ որ ներկայացուած գործերը շատ յաճախ կապ չունին ոչ գաղութահայ եւ ոչ ալ հայկական (հայաստանեա՞ն) կեանքին հետ:

Այս վերջին հարցումը՝ ինչո՞ւ թատրոն պահել, կարծես կորիզն է մնացեալ հարցումներուն:

Փոխուող Սփիւռքի մը եւ փոխուող ժամանակներու մէջ կ'արժէ՛ այս հարցումին մասին մտածել, համոզիչ պատասխաններ փնտռել եւ անշուշտ՝ գտնել:

«ԷՂԻՒՏ ԿԱՆԱՅ ՄԱՍԻՆ»

Երաժշտախառն թատերգութիւն, հեղինակութեամբ եւ բեմադրութեամբ Երեւանէն յատկապէս հրաւիրուած Արա Երնջակեանի:

Ընդունուած իրողութիւն է, որ երգիծական եւ երաժշտախառն թատերգութիւնները չունենան ողբերգութիւններու կուռ, անակնկալներով յագեցած եւ կեանքի ճշմարտութիւնները մերկացնող կառոյցը: Բայց երաժշտախառն թատրոնը, թէեւ գլխաւորաբար երգերու եւ երաժշտութեան կը վստահուի, բայց եւ այնպէս պիտի ունենայ գոնէ պատումի գիծ մը, որ հանդիսատեսը սկիզբէն մինչեւ վերջ բեմին կապէ:

Թատրոնը չի նմանիր այլ արուեստներու, ըսենք նկարչութեան, քանդակագործութեան, նոյնիսկ գրականութեան, թէեւ անոր կարեւորագոյն ժանրերէն մին կը համարուի: Երբ գիրք մը, գրութիւն մը, նկար մը կամ քանդակ մը կ'ուսումնասիրենք, մեր աչքին առջեւ գործը ունինք, առանց միջնորդի, առանց համագործակիցներու: Թատերգութեան պարագային ունինք գրութիւնը ինք, այդ գրութեան բեմադրութիւնը, եւ այդ գրութեան իրականացումը դերասաններու կողմէ, որոնցմէ իւրաքանչիւրը իր մեկնաբանութիւնը կը դնէ անոր մէջ:

Այս երաժշտախառն թատրոնը դասական իմաստով կառոյց չունի. կիներու մասին մտածումներ են, դարերէն եկած «իմաստութիւններ», որոնք կը ներկայացուին հինգ կարանաւոր, բանտաձողբու ետեւէն իրենց խօսքը ըսող եւ կիներու մասին «փիլիսոփայող» տղամարդոց կողմէ: Այս հինգ տղամարդիկը մէկ ամբողջութիւն կը կազմեն, այն իմաստով որ իւրաքանչիւր տղամարդու մէջ կարելի է գտնել ե՛ւ համակերպողը, ե՛ւ ըմբոստը, ե՛ւ կիներու թշնամին, ե՛ւ կնոջ ենթարկուող կերպարը: Եւ ուրեմն ամբողջ թատերգութիւնը կը դառնայ մենախօսութիւն մը, որ երբեմն նաեւ դասախօսութեան համ կու տայ:

«Կարանաւոր» տղամարդիկը գրեթէ բնաւ առիթ չունին բեմին վրայ իրենց մարմինը օգտագործելու դերակատարումի ընթացքին, որովհետեւ... կարանաւոր են եւ շղթայակապ: Կը մնայ ուրեմն ապաստանիլ մնջախաղին:

Ասիկա սակայն այլ արուեստ մըն է, եւ բնաւ պայման չէ, որ լաւ դերասանը նաեւ մնջախաղի վարպետ ըլլայ: Յետոյ կայ նաեւ բեմին հեռաւորութիւնը հանդիսասրահէն, ինչ որ պատճառ կը դառնայ, որ դիմագծային մանրամասնութիւնները յստակ չտեսնուին հանդիսատեսին կողմէ: Հաւանաբար հոսկէ է հինգ դերասաններուն նոյնանման խաղարկութեան խնդիրը:

Հեղինակը, որ մասնագիտութեամբ բեմադրիչ է, եւ իրապէս նորութիւն կրցած է մտցնել գրեթէ իր բոլոր բեմադրութիւններուն մէջ, կ'ըսէ.

«Համակարգիչի դարում, արագ զարգանալու եւ տեղեկութիւն հաւաքելու վարժուած երիտասարդը, երբ տեսնում է դանդաղաչարժ մի պատմութիւն, անմիջապէս հեռանում է թատրոնից, որովհետեւ երեք նախադասութիւնից ետք, արդէն ամէն ինչ պարզ է»: Հետեւաբար, ըստ հեղինակին, «նորութիւնը նոր խօսքի մէջ չէ, այլ նոր ըսելաձեւի»:

Բայց ո՞րն է նոր ըսելաձեւը «էդիւտ Կանանց Մասին» թատերգութեան մէջ. երաժշտախառն թատերգութիւնները շատ վաղուց ծանօթ են, երգերը որ հոն կ'երգուին, մեր հին ու նոր երգերն են, իսկ ինչ որ կ'ըսուի այնտեղ, Եւայի օրերէն արդէն լսուած է:

Կը մնայ բեմադրութիւնը իր «գիւտերով», եւ կը մնայ դերասաններուն խաղարկութիւնը. այս երկուքով է, որ հալէպահայ հանդիսատեսը կը գրաւուի: Սակայն ոչ բոլորը... տիկիւններուն մեծամասնութիւնը դժգոհ էր արտայայտուած գաղափարներէն.

- Բացէ ի բաց կիներուն վրայ կը խնդան...

Այդ օրերուն Հայէպի մէջ ընտրութիւններ չկային...

Ի վերջոյ սակայն երաժշտախառն թատրոն մը դիտուելու է ճիշդ որպէս ա՛յլ՝ երաժշտախառն թատրոն, առանց շատ խորանալու, եւ պահուն հաճոյքը լաւագոյնս քաղելու տրամադրութեամբ:

Մարուշ Երամեան

~ ՄԵԾԱՐԱՆՔ ԵՒ ՅԱՃԱԽԱՆՔ ~

Մէկ արար

Անձնաւորութիւններ՝

Գայանէ — բեմադիր

Կառվարեան Կարապետ — վարիչ

Մերոբ — օգնական

Նայիրի — փոքրիկ

Մարկոսեան Մարգարիտ — մեկենաս, տարեց

Տիկին Տը Պարպ — տնօրէնուհի

Ա. — առաջնորդ, աներեւոյթ

Ընդունարան մը: Բազկաթոռ մը եւ երկու աթոռներ, փոքրիկ սեղան մը, վրան՝ ծաղկեփունջ: Խորքը՝ վարագուրապատ, պատէն կախուած հանդիսութեան որմագր: Չախէն՝ մուտք, աջէն՝ թատրոնի սրահ առաջնորդող դուռ:

Գ — Ո՛հ, ո՛չ, չենք կրնար պատանիները շահագործել, պատի նման կանգնեցնել բեմին վրայ: Այս մէկը յայտագրին մաս չի կազմեր:

Կ — Պայմանները կը ստիպեն:

Գ — Ի՞նչ պայման: Ես միայն ու միայն մանուկներուն աչխատանքին յարգանքի պայմանը կը ճանչնամ եւ բեմարւեստի պահանջները:

Կ — Այս հանդիսութիւնը յարմարագոյն առիթն է մեծաբելու տիկինը: Եւ յետոյ՝ Ա.ին ցանկութիւնն է:

Գ — Ա.ն եթէ կ'ողջ խօսք առնել, թող առնէ՝ Ֆօլքլօր է, բայց մեծ վնաս չունի, վարժուած ենք: Սակայն մնացեալ կարգադրութիւնները մեր ծրագրին հակոտնեայ են:

(Նրս կը մտնէ Մերոբ)

Ս — Պատանիները բեմին վրայ պատրաստ են, շարուած:

Գ – Ո՛չ Սերոր, ես համաձայն չեմ այս վերջին վայրկեանի կարգադրութիւններուն:

Ս – Ղափաս մի՛ ուտէր Գայանէ: Վերջնական որոշեցէ՛ք, յետոյ, ինծի ըսէք պէ՛: Ո՛չ ես, ո՛չ ալ չոճուխները խաղալիք ենք: Վե՛ր ել, վա՛ր իջիւր, սա՛նկ ըրէ, նանկ մի՛ ընէր: (Սերոր մտքմտքալով կը մեկնի)

Կ – Ես կը սիրեմ վերջին պահու խենթութիւնները: Անակնկալները: Հետաքրքրութիւնը արթուն կը պահէ, ուշադրութիւնը կը սրէ:

Գ – Ես ալ կը սիրեմ բեմական խստապահանջութիւնն ու կարգապահութիւնը, փորձարկուած վիճակները:

(Ներս կը մտնէ Նայիրի, կ'երթայ ուղիղ Գայանէին դիմացը կը կանգնի)

Ն – Ե՞ս ալ պէտք է բեմ բարձրանամ մեծերուն հետ:

Գ – Հիմա չէ՛, անուշիկ, երբ որ կարգդ գայ. հիմա, դուն պէտք չունիս բեմ բարձրանալու:

Ն – Գիտես, մամաս եւ պապաս սրահն են: Պատիկ եղբայրս ալ, Արամի՛ կը: Արամիկին արդէն պատմեցի թէ բեմին վրայ ինչ պիտի ընեմ:

Գ – Ապրի՛ս:

Ն – Հիմա սրահին մէջն է, լուռ պիտի նստի: Զգուշացուցի՝ «երբ որ ինծի բեմին վրայ տեսնես չպոռաս, անունս բարձրաձայն չի կանչես»:

Գ – Ապրի՛ս: Հիմա, տեղդ վերադարձիր, երբ ժամանակը գայ բեմ կ'ելես:

Ն – Մեծերը, ի՞նչու բեմ ելան: Դուն ըսած էիր որ նուագողները բեմ պիտի ելեն, սկիզբը:

Գ – Ես ալ չեմ գիտեր թէ ինչո՞ւ մեծերը բեմ ելան երաժիշտներէն առաջ:

Ն – Ես ալ չե՞մ կրնար քովերնին կանգնիլ:

Գ – Դո՛ւն, նախընտրելի է որ կարգդ սպասես:

Ն – Մամայիս-պապայիս ըսեմ որ սկիզբը մեծերը պիտի սկսին: Բայց ի՞նչ պիտի ընեն բեմին վրայ:

Գ – Բան մըն ալ պիտի չընեն, պատի պէս պիտի կենան:

Ն – Հա՞:

Գ – Ա՛յո:

Կ – Զէ՛ (միջամտելով): Մ'նտրիկ աղջիկ, է՛ս քեզի բացատրեմ: Սկիզբը, Ա.ն պիտի խօսի, խոշոր մեծ մամայի մը շքանշան պիտի տայ, Տիկին Մարգարիտ Մարկոսեանին: Մեծերը մեծ մամային պիտի շրջապատեն որ ուժ տան անոր, որպէսզի ան երկար ապրի... Հասկցա՞ր:

Ն – (Գլխով նշան կ'ընէ):

Գ – Եկո՛ւր միասին երթանք պատրաստուինք:

Կ – (Գայանէին համոզակամ) Վերջապէս հասկցիր աղջի՛, կիներ իր ամբողջ հարստութիւնը պիտի կտակէ դուրոցին, պատե՛հ առիթ է, երեւակայէ բեմ բարձրանալուն պէս, ետեւէն, աննշմար, վարագոյրը բացուի ու աւարտական պատանիներու խումբը ետին կանգնած ըլլայ: Դուրոցին հունձքը, ի՛ր հունձքը: Դո՛ւն ըսէ՝ պատկերը գեղեցիկ չէ՞:

Գ – Շա՛տ լաւ, դրա՛մ ունի, մեծարե՛նք: Անոր համար տարիէ մը ի վեր պատրաստուող ներկայացումը նուազեցնենք ու արժեգրկենք: Ոչ մէկս ժամանակ, աշխատանք, գոհողութիւն չենք խնայած. յայտագրի մշակում, բեմադրութիւն, զգեստներու եւ բեմական իրերու պատրաստութիւն, շաբաթօրեայ փորձեր, տքնաջան աշխատանք, այս ամբողջը անտեսենք ու վերջին պահու բեմադրական գիւտըրը գործադրենք:

Ա — Ամէ՛ն ինչ ի՛ր տեղին: Պատանիները ամբողջ տարին եկան, այո՛, փորձերուն մասնակցեցան, այո՛, բայց գիտցիր որ տօնակատարութիւնը չէր իրենց բուն հետաքրքրութիւնը, անոնց կը հետաքրքրէ՝ ընկերութիւն ընել, կատակել, գուարճանալ, աղջիկ-տղայ գիրար տեսնել. տարիքնին է: Իսկ, գեղարուեստ, թատրոն, հանդիսութիւն, հայերէն, եւայլն, բոլորն ալ պատրուակ են: Մասնակցողներուն մէջէն մէկ երկու հոգին միայն արուեստագէտ ըլլալու խմոր ունին, մընացեալը՝ հետեւակ է:

Գ — Ձգայացունց գաղափարներովդ կ'ուզես տպաւորել զիս, բայց գիտցիր որ այդ հետեւակ կոչած խումբդ կարիքն ունի մշակութային ինքնուրոյն տըպաւորութիւններ ստանալու, եթէ դուն չի տաս այդ սնունդը, արդէն Ֆրանսականը, անգլիականը, միջազգայնականը, շուկայականը, առանց այլեւայլի հայկականին տեղը կը գրաւեն: Մշակոյթը ճաշակովի խնդիր է: Եթէ այս սերունդը մշակոյթը չուտէ, ինչպէս որ խորոված կ'ուտէ, հայութիւն ըսած մարմինդ չապրիր: Ասոր կողքին, ստեղծագործողը թող ստեղծագործէ, ժողովուրդն ալ ճաշակէ, սպառէ ստեղծագործւածն ու անցեալէն հասածը:

Ա — Անուշա, ամէն անգամ որ հետդ կը խօսիմ, կ'այրես զիս, որքան կակուղ ըլլամ, այնքան կը կարծրանաս. որքան կարծրանամ այնքան հատող կը դառնաս: Ամէն պարագայի, այս բանը լաւ իմացիր, եթէ այս կնիկէն կտակը ձեռք չբերենք, ո՛չ հետեւակին մշակութային ճաշակին բարձրացումը կ'իրականանայ, ո՛չ ալ այս երիտասարդներուն իրար տեսնելու

հաճոյքը, ո՛չ ալ մեր այս հաճելի խօսակցութիւնը: Իսկ դո՛ւրսը, կտակ որսացող անօթի գայլեր շատ կան:

(Սերոբ կը վերադառնայ)

Ս — Պապամ, ի՞նչ կ'ընէք կոր, ե՞րբ պիտի սկսինք: Ժողովուրդը անհամբեր կը սպասէ կոր. քիչ պիտի մնայ որ ատ հէրկէյէները բեմին վրայ իրար ուտեն. դուք ալ հոս չեմ գիտեր ինչ ապուր էփելու վրայ էք:

Ա — Հօտը թող սպասէ: Մինչեւ Ա-ն չի գայ, չենք կրնար սկսիլ:

Ս — Է՛հ, գոնէ յայտարարութիւն մը ըրէ:

Ա — Ըսէ՛, թող թեթեւ նուազ մը ցրէ:

Գ — Եկո՛ւր, Նայիրի, մենք ալ երթանք պատրաստուինք:

(Սերոբը դուրս կ'ելլէ: Գ-այսնէն եւ Նայիրին ետեւէն: Կառվարեան մինակ կը մնայ: Հեռուէն կը լսուի բազմութեան խօսակցութեան խուլ ձայնը: Երկար դադարէ ետք, Սերոբին օգնութեամբ, թեւանցուկ, ներս կը մտնէ Մարգարիտ Մարկոսեան դանդաղ ու ծանր քայլերով, ծանր շունչ առնելով)

Ա — Բարեա՛ւ Տիկին Մարկոսեան, անհամբեր ձեզի կը սպասէինք:

Մ — Բարեւ ձեզ, կը ներէք խանգարելուս: Գիտէք թէ ո՞ւր է Ա-ն:

Ա — Ա-ն տակաւին չէ հասած: Ուշացաւ: Խնդրեմ նըստեցէք:

(Մարգարիտ Մարկոսեանին թեւէն բռնելով, Սերոբին հետ միասին կը նստեցնեն զինք բազկաթոռին վրայ)

Մ — Ինծի այստեղ դրկեցին, ըսելով որ Ա-ին սպասեմ:

(Սերոբ դուրս կ'ելլէ)

Ա — Այո՛, ես թելադրեցի:

Մ — Ի՞նչ պատմութիւն է այս շքանշանի պատմութիւնը: Լաւ չհասկցայ: Հեռաձայնով ըսաւ որ Սահակ-Մեսրոպ շքանշան պիտի տան եղեր: Ինչո՞ւ:

Կ — Անչո՛ւշտ տիկին Մարկոսեան, ձեզի շքանշան չտանք, որուն պիտի տանք: Դուք ամենէն արժանաւոր անձն էք մեր համայնքին:

Մ — Ամուսինիս թող տան: Ան սկսաւ գործը: Տէ՛ր աստուած, դուն ազատէ զիս այս տանջանքէն, (ծանր շունչ քաշելով)... միակս տան մէջ, երկու անգամ գետին ինկայ... կողս կը ցաւի, ծունկս կը ցաւի, սիրտս կը ցաւի... (Լռութիւն: Կը լսուի, մեղմ, բարձրախօսով ցրուած «Հումձ-քի...»ի նուազը) մենք մանկութիւն չունեցանք: Շուտով ամուսնացուցին: Յետոյ՝ պատերազմի օրեր... ամուսինիս պէտք է տայիք շքանշանը: Ան ըրաւ ամէն ինչ:

Կ — Ան ձեզի կը յանձնէ շքանշանը մեր համայնքին երախտագիտութիւնը արտայայտելու համար ձեզի եւ ձեր անձին ընդմէջէն ձեր ամուսնուն նաեւ:

Մ — Ամուսինս թերահաւատ էր, ե՛ս ալ: Ան քաջալերեց, որ մեր չունեցած մանկութեան փոխարէն, այսօրուայ մանուկներուն համար դպրոց մը կառուցենք, որպէսզի անոնք գոնէ ստանան մեր չստացածը, ապրին մեր չապրածը: Համոզեց: Մեր սրտին խօսեցաւ:

Կ — Ինչպէս գիտէք արդէն քսան տարի է, որ դպրոցը գոյութիւն ունի, եւ տարի մըն է որ մենք կը պատրաստուինք այս տարեդարձը տօնելու: Ձեր ներկայութիւնը բոլորին համար նուիրումի գերագոյն օրինակն է:

Մ — Ամուսինս պէտք է տեսներ ձեր աշխատանքը, որ գոհունակ հեռանար: Սկիզբը, դժուար էր: Շրջապատին ծիծաղին առարկան դարձաւ, իրեն կ'ըսէին դրամդ պատու-

հանէն դուրս կը թափես: (Հազը կը բռնէ) Նոյնիսկ ըսողներ եղան՝ խաբեբաներու, աւագակներու նուիրատուութիւն կ'ընես:

Կ — Ջուր կ'ուզէ՞ք տիկին Մարկոսեան :

Մ — (Երկար հազալէ ետք) Պահ է, որ երթամ, որքան շուտ միանամ անոր, այնքան լաւ: Սիրտս գօրաւոր կը զարնէ: Կը կանչէ, զանգը կը հնչեցնէ (նորէն կը հագայ)...

Կ — Տիկին Մարկոսեան, ջո՛ւր բերել տամ ...

(Կառվարեան դուրս կ' ելլէ: Պահ մը լուռ սրահէն սփռուած երաժշտութիւնը կը լսուի: Ներս կը մտնէ տիկին Տիկին Տը Պարպ: Չի նկատէր Մարգարիտ Մարկոսեանին: Դրան առջեւ, տատամտ կը սպասէ: Ներս կը մտնէ Կառվարեան)

Տ — Բարեւ ձեզ մէօսիօ Կառվարեան: Ե՞րբ պիտի սկսիք:

Կ — Բարեւ մատամ Տը Պարպ: Շատ ուրախ եմ որ ընդունաջեցիք մեր հրաւերին ներկայ գտնուելու այս հանդիսութեան:

Տ — Ինչպէ՞ս թէ մէօսիօ Կառվարեան: Վերջապէս դըպրոցին տնօրէնուհին եմ, անոր քսանամեակին նուիրուած հանդիսութիւն է, դպրոցին ներկայի եւ անցեալի աշակերտութեան կողմէ պատրաստուած: Ի՞նչ է կ'ուզէք զիս ամօթով հանել:

Կ — (Ընդմիջելով) Կը ներէք մատամ Տը Պարպ, խօսքերնիդ մեղրով կտրեմ: (Դառնալով Մարգարիտ Մարկոսեանին) Տիկին Մարկոսեան, ի՛սկոյն ջուրը կը բերեն:

Մ — Շնորհակալ եմ, տղաս:

Տ — Մատամ Մարկոսեա՞ն, ա՛հ, շա՛տ կը ներէք մատամ, ինչպէ՞ս չնկատեցի ձեզ: Այս ո՛րքան փոխուած էք:

Մ — Բարեւ մատամ Տը Պարպ: (Ոտքի կանգնիլ ջանալով)

Տ — Պէտք չկայ յոտքի կանգնելու, հանգիստ, նստած մնա-

ցէք: Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար: Երկար ատեն է, որ չէք երեւար:

Մ – Հանդէսէ հանդէս: Այս տարիքիս շարժելու կարողութիւնս սահմանափակ է:

Կ – Գիտէ՞ք մատամ Տը Պարպ, այսօր բացառիկ օր մըն է մեզի համար: Երախտագիտութեան շքանշան պիտի յանձնենք տիկին Մարկոսեանին, դպրոցին քսանամեակին առթիւ:

Տ – Կը շնորհակտրեմ մատամ Մարկոսեան. բնաւ տեղեակ չէի, սրտա՛նց կը շնորհակտրեմ:

(Սերոբ ներս կը մտնէ շիշ մը ջուր եւ բաժակ մը, ձեռքին)

Մ – (Բոլորին) Բարե՛ւ ձեզ: (Մարգարիտ Մարկոսեանին) Տիկին Մարկոսեան, ահաւասիկ գաւաթ մը ջուր: (Ձուր լեցնելով) Հրամեցէ՛ք:

Մ – Շնորհակալ եմ:

Տ – (Գառնալով Կառվարեանին) Մէօսիօ Կառվարեան կըրնայիք ինծի նախապէս տեղեակ պահել, որպէսզի գոնէ, այս ուրախ առիթով, ծաղկեփունջ մը նուիրէի մատամ Մարկոսեանին իմ կողմէս:

Կ – Ա.ին ցանկութիւնն էր, լուրը չտարածել, բոլորովին անակնկալ պահել: Գիտէք ձեզի համար մասնաւոր տեղ ապահոված ենք: Յոյց տա՞մ ձեր տեղը:

Մ – (Կողմնակի) Շատ էրես մի տար, ատ կնկան:

Տ – Քանի՞ ժամ պիտի տեւէ հանդիսութիւնը:

Կ – Քանի ժամ: (Լուրջ) Չո՛րս:

Տ – Ա՛հ, ո՛չ, ո՛չ, չեմ կրնար, անկարելի է:

Կ – Լաւ, ձեզի համար մէկ ու կէս ժամէն երկու ժամի կ'իջեցնենք, յարմար է:

Տ – Չէ՛, չէ՛, ո՛չ ինծի համար, բայց մանուկներուն համար անհանդուրժելի է:

Կ – Մատամ Տը Պարպ, մեր մանուկներուն համար չորս ժամը ե՛ւ հանդուրժելի կ'ըլլար ե՛ւ հաճելի: Անոնք, եթէ տա՛սը ժամ ալ միասին ըլլան, իրարմէ չեն ձանձրանար...

Տ – Ըսենք թէ այդպէս է, բայց նորէն ալ պէտք չէ չափազանցել:

Կ – Միշտ կը տպաւորէք զիս ձեր լրջութեամբ: Ես ալ հակառակին պէս, երբ ձեզի տեսնեմ, չեմ գիտեր ինչո՞ւ, չեմ կրնար ինքզինքս գսպել կատակել: Ձեր հանդէպ իմ համակրանքս արտայայտելու եղանակս է, թերեւս:

Մ – (Կողմնակի) Ուլա՛ն, կը բաւէ ճիւլալամիշ ընես: Չի՛ փայլիր:

Տ – Այո, բայց կատակելու ժամանակը չէ: Պատիկները ֆրանսերէնով ալ բաժին մը պիտի ներկայացնեն, չէ՞:

Կ – Անշուշտ երկու երգ, այն ինչ որ դպրոցին ուսուցիչները պատրաստած են, այս առթիւ:

Տ – Քիչ է, երկու երգ. հազիւ հինգ վեց վայրկեան տեւէ, չորս ժամուան վրայ, չէ՛ ներողութիւն, մէկ ու կէս ժամաւ վրայ:

Կ – Այո՛ կարճ է, բայց անհրաժեշտ ու տեղին: Կարկանդակին վրայ դրուած կարմիր ու գրաւիչ ելակին կը նմանի...

Մ – (Կողմնակի) Բերաննիս մազ բուսաւ ասոր ըսելէն քի՛ «օրիորդներուդ, պարոններուդ ըսէ՛, չօճուխներուն երգ-մերգ թող սորվեցունեն»: Հո՛գը չէ, աներես: (Դուրս կ'ելլէ):

Տ – Դպրոցին ուսուցիչները բազմազբաղ են, կը թական ծրագիրը պէտք է հասցնեն: Դուք ալ միշտ հանդէս մը մէջտեղ կը հանէք, գեղարուեստական յայտագրին մասնակցութիւն կը պահանջէք:

Կ – Մատամ Տը Պարպ, բեմն ալ դպրոց է՝ ինքնուրոյն կըրթուի թիւն: Զեզի՛ դպրոցը, մեզի ալ՝ բեմը: Եթէ կարենայի՛ն դպրոց եւ բեմ ձեռք-ձեռքի տալ: Պէտք էր, որ ես ձեզի հետ մոռուսացած ըլլայի... Խօսքը մէջերնիս, երիտասարդ ատենս եթէ ձեզի հանդիպած ըլլայի, այն ատեն՝ դպրոց եւ բեմ, թեւ-թեւի մտած յեղափոխութիւն կ'ընէինք:

Տ – Մէօսիօ Կառվարեան կը բաւէ՛: Ե՞րբ պիտի սկսի հանդիսութիւնը:

Կ – Զեզի՛ կը սպասէինք, անհամբեր: Եկէ՛ք, այս դռնէն ուղղակի սրահ մտէք: (Կ'երթայ աջ կողմի դուռը կը բանայ) Անցէ՛ք ներս, ես ալ տիկին Մարկոսեանին հետ ձեզի կը հետեւիմ:

Տ – Այո՛, ճի՛շտ է, մատամ Մարկոսեանը: (Մարգարիտ Մարկոսեանին դիմելով) Մատամ, մինակ պիտի ձգէինք ձեզի այստեղ, եկէ՛ք, միասին երթանք:

(Կառվարեան եւ տիկին Տը Պարպ, Մարգարիտ Մարկոսեանին թեւերէն բռնած վեր կը բարձրացնեն, այս միջոցին, երաժշտութեան ձայնը կը կտրի ու բարձրախօսէն կը լսուի Ա.ին ձայնը: Դանդաղօրէն կ' ուղղուին դէպի աջ դուռը: Երբ դուռս կ' ելլեն, դուռը կիսաբաց կը մնայ եւ ընդունարանը՝ պարապ: Բարձրախօսին ձայնը կը շարունակէ)

Ա. – Յարգարժան քաղաքապետ պարոն Փայլուն, պատուելի տէր Սահակ աւագ քահանայ, ազնուափայլ տնօրէնուհի տիկին Տը Պարպ, սիրելի եւ յարգելի հոգարարձուներ, ծնողներ եւ ներկաներ, այսօ՛ր մեզի համար եզակի օր մըն է: Այսօ՛ր Մարկոսեան դպրոցը քսան տարեկան է, չափահաս, ամրակամ, հիւրընկալ կրթական դարբնոցը մեր մանուկներուն: Քսան տարիներ առաջ, հիմքը կը դրուէր անդրանիկ ամէնօրեայ այս օճախին՝ Մարկոսեան վարժա-

րանին, շնորհիւ առատաձեռն նուիրատուութեան Մարկոսեան ամոլին:

Արդէն տասը տարի է ի վեր պարոն Մարկոսեան հեռացած է այս աշխարհէն: Տիկին Մարկոսեան անդու ու հաստատակամ կերպով կը շարունակէ իր սիրեցեալ ամուսնոյն հետ սկսած բարեխնամ գործը: Դպրոցին քսանամեակին առթիւ կ'ուզենք մեր երախտագիտական զգացումը արտայայտել տիկին Մարկոսեանին եւ զինք պատուել մայրավանք էջմիածնէն յատուկ իրեն յղուած Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանով:

Բեմ կը հրաւիրեմ տիկին Մարկոսեանը որ ստանայ շքանշանը եւ տէր Սահակը որ ընթերցէ վեհափառ հայրապետին անգնուափայլ տիկնոջ յղած կոնդակը Սահակ-Մեսրոպ գերագոյն շքանշանին տուչութեան առիթով...

(Կը լսուի «Ուրախ լեր» շարականը, բեմը կը մթննայ, աջ դրան բացուածքէն լոյսի շերտ մը կը թափանցէ ընդունարանէն ներս)

Վերջ

Ժիրայր Չոլաքեան